

Եղիշե Պետրոսյան

ՐԱՖՖՈՒ 60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19-րդ դարի 60-ական թվականներին գրական ասպարեզ է իջնում հայ կլասիկ գրականության, հայ հասարակական մտքի խոշորագույն դեմքերից մեկը՝ Հակոբ Մելիք Հակոբյանը՝ Րաֆֆին։ Որպես գեղարվեստական խոսքի մեծ վարպետ, որպես մտածող հսկայական է Րաֆֆու դերը հայ գրականության, հայ հասարակական մտքի զարգացման պատմության մեջ։

Րաֆֆու մահվան առթիվ գրած հոդվածում Գր. Արծրունին պատմում է, որ Րաֆֆուն 1871 թ. իր հետ ծանոթացրել է եղբայրը՝ Ս. Արծրունին «ավելացնելով, որ նա բազմաթիվ անտիպ գրվածքներ ունի և կարող է պիտանի լինել նոր ծնվող «Մշակի» խմբագրությանը»¹։

1874 թվականին հրատարակված «Փունջի» առաջին հատորի առաջաբանում Րաֆֆին ընթերցող հասարակությանը ծանոթացնում է «Փունջի» հետագա հատորների բովանդակությանը։ Շատ բնորոշ է, որ 1873 թվականին Րաֆֆին արդեն տպագրության պատրաստ ուներ իր երկերի Տասնատուրյա ժողովածուն։

Այս ցույց է տալիս, որ Րաֆֆին նախքան «Մշակի» երևան գալը ստեղծագործական լուրջ ճանապարհ անցած, կազմակերպված գրող էր, և հետևաբար չափազանցություն պետք է համարել հայ բուրժուական գրականագիտության այն պնդումը, թե Րաֆֆին Րաֆֆի դարձավ միայն «Մշակի» էջերում։ Րաֆֆին 60-ական թվականների ստեղծագործություններում դրսևորել է իր հասարակական-քաղաքական աշխարհայացքի մի շարք կարևորագույն դրույթներ, որոնց նա հավատարիմ մնաց նաև հետագայում։ Այս է ապացուցում Րաֆֆու 60-ական թվականների գործերի և հատկապես այս շրջանի նրա ամենակարևոր ու բնորոշ երկի՝ «Սալբի» վեպի քննությունը։ Րաֆֆին իր այս վեպը գրել է 1855 թ.՝ դրաբարով։ Հետագայում, ինչպես ինքն է խոստովանում, «Հյուսիսափայլի» գրական ուղղության ազդեցության տակ աշխարհաբարի է փոխում վեպի լեզուն։ Վեպի առաջաբանը գրված է եղել 1867 թ., որի ոգով և հեղինակը հետագայում քանիցս վերամշակել է ամբողջ վեպը։

60-ական թվականները Րաֆֆու հասարակական-քաղաքական աշխարհայացքի կազմավորման տարիներն են։

Իսկապես, Րաֆֆու 60-ական թվականների ստեղծագործությունները կանխորոշում են նրա հետագա սրբական ճանապարհը և վճռական նշանակություն ունեն հեղինակի հասարակական-քաղաքական աշխարհայացքի բացահայտման համար։

Քննենք Րաֆֆու 60-ական թվականների երկերում արծարծված հիմնական հարցերը։

¹ «Մշակ», 1888, № 48.

1

Հայ ժողովրդի սոցիալական-քաղաքական կյանքի արտացոլումը և ազատասիրական պայքարի հարցերի արծարծումը հանդիսանում են Րաֆֆու ինչպես այս, այնպես էլ նրա հետագա շրջանի ողջ ստեղծագործությունների ամենաբնորոշ առանձնահատկությունները, որտեղ այնքան ցայտուն կերպով դրսևորված են հեղինակի գրական մեծ էրուդիցիան, անհուն սերը դեպի աշխատավորական մասսաները և ատելությունը դեպի հայրենի ու օտար կեղեքիչները, դեպի բուրժուական մեծ պետությունների կողմից տարվող գաղութային կողոպտիչ քաղաքականությունը:

60-ական թվականներին Րաֆֆու հասարակական քաղաքական աշխարհայացքի ձևավորման գործում նկատելի դեր է կատարել Միքայել Նալբանդյանի ազդեցությունը:

1868 թ. հունվարին Ղազարոս Աղայանին հանդիպելիս, Րաֆֆին, Աղայանի խոստովանությամբ, իր քաղաքական դավանալիքի մասին արել է հետևյալ շատ կարևոր խոստովանությունը.

«Ես Նալբանդյանցի ուղղությամբ եմ համակրում, իսկ իմ կարծիքով միակ ուղիղ նախապաշին նրա փառալուծն է»¹:

Րաֆֆու և Նալբանդյանի գաղափարական կապի արտահայտությունը պետք է համարել նրա ջերմ վերաբերմունքը դեպի Նալբանդյանի անձնավորությունը, իր անդրանիկ աշխատության՝ «Սալբի» վեպի նվիրումը Միքայել Նալբանդյանի անմահ հիշատակին: Րաֆֆին «Սալբի» վեպի ընթացականում գրել է.

«Անմահ Մ. Նալբանդյանցի միշտ օրհնյալ հիշատակին, խորին մեծարանքով

ն վ ե ռ .

Ինձ քաղցր էր այդ պաշտելի տղամարդի հավիտենական հիշատակը հարգել՝ իմ աշխատությանց երախայրիքն նորան ընծայելով: Թեպետ «Սալբի» հեղինակը չի ունեցել պատվելի Հանգուցելու հետ խիստ մոտավոր ծանոթություն, բայց քանի կա և կապրի հայոց լեզուն և հայ գրականությունը, Մ. Նալբանդյանցի անմահ հիշատակը միշտ կունենա յուր զգալի համակրությունքը ամեն մի հայի սրտում մինչև դարերի վերջը»²:

Նշանակալի է այն հանգամանքը, որ Նալբանդյանի նկատմամբ Րաֆֆու ունեցած ջերմ վերաբերմունքը արտահայտված է նաև նրա այս շրջանի նամակներում: 1868 թ. Գ. Ավթանդիլյանին գրած իր նամակներից մեկում Րաֆֆին դրում է. «Քանքարավոր Նալբանդյանցի ցավսլի կյանքը և նորա սգավոր մահը նկարագրող լրագիրը անհամբերությամբ սպասում եմ ստանալ, որ և անհապաղ ետ կդարձուցանեմ»:

Նույն թվականի հունվարի 29-ին հասցեագրված նամակում Րաֆֆին հայտնում է սպասվող լրագրերի ստացման մասին, ավելացնելով. «Այս հատվածը այնքան գոհացուցիչ չէր, ազդային այդ թանկագին դոհի ցավալի մահը նկարագրելու համար՝ հռչակավոր Հյուդոյի գրիչն պետք է և Արովյանցի վառված կրակված սիրտը»:

¹ Ղ. Աղայան, Ծրկեր, հատ. 3, 1949, էջ 111 (ընդգծումը մերն է—Ծ. Պ):

² Րաֆֆի, Ծրկերի ժողովածու, հատ. 2, էջ VI:

Միթե այդքան կարճ պետք է խոսել այս տղամարդի մասին, որ այնքան երկար ու սրտաշարժ ոճով խոսել է մեր ազգային պիտույքների մասին»¹։

Բաֆֆու և Նալրանդյանի գաղափարական կապերը, նրա այս շրջանի դեմոկրատական աշխարհայացքը առավել ցայտուն և բազմակողմանի դրսևորվել են հեղինակի վաղ շրջանի աշխատություններում, և հատկապես «Սալբի» վեպում, որը դժբախտաբար դուրս է մնացել հայ գրական քննադատության տեսադաշտից։

2

Բաֆֆին իր «Սալբի» ծավալուն վեպում լայն կտավի վրա պատկերել է պարսկահայ գյուղացիության տնտեսական-քաղաքական ծանր, անագորույն այն պայմանները, որի մեջ գտնվում էր նա անցյալ դարի առաջին կեսերին։

Երկիրը հարուստ է, հողը բերրի, ժողովուրդը՝ աշխատասեր։ Սակայն ապարդյուն է գյուղացու անդադրում աշխատանքը, որովհետև նրա՛ն չի պատկանում հողը, նրա՛ն չի պատկանում իր վաստակը։ «Խղճալի գյուղացին այստեղ հանգիստ չունի գործելուց, — գրում է Բաֆֆին, — նրա ընտանիքի ապրուստի պիտույքների վրա ծանրանում են ավելի խանի անտանելի հարկերը, ստիպում են նրանց գործել, և գործել չափից դուրս իրանց անձերը մաշելու և սպառելու չափ...»

... Ոչ ոք տուանց արտասունքի չէր կարող նայել այդպիսի բազմաթիվ աշխատավոր հասարակության վրա, որ հեծում և հառաչում էին աղքատության լծի տակ... նրանք մշակում են ուրիշի հողը, նրանք իրանց աշխատություններով լցնում են ուրիշի ֆսակը»²։

Այս նույն վիճակը Բաֆֆին տեսել էր նաև իր ճանապարհորդության ժամանակ տաճկահայ գավառներում, որի ամփոփական տպավորության տակ էլ նա 1857 թ. գրում է իր «Մշակ» ծավալուն բանաստեղծությունը։ Վշտահար, հազար ցավերով լի է գյուղացու սիրտը։ Ինչո՞ւ... —

Ա՛խ նա օտարի հողն է մշակում
Որի պտուղը նա չի ճաշակում։

Գալիս է կրակոտ ամառը՝ աշխատանքի ու բերքի եղանակը։ Օրն ի բուն աշխատում է հողագործ գյուղացին և սակայն ձեռնունայն մնում այս ամենից։

Պտուղը յուր ձեռքի քրտինքի արյան,
Եվ այդ բոլորը նա զոհ է բերում,
Կալվածատիրոջ լեցնում ամբարում,
Անիծելով բախտը զնում է իր տուն,
Լեցնում է սև օր, քաղցած գերդաստան...³։

Խորամուկ լինելով հայ ժողովրդի երկու հատվածների՝ տաճկահայերի և պարսկահայերի այս ողբերգական կյանքի բուն պատճառների մեջ, Բաֆֆին

¹ Գ. Ազնավուրյան, Նոր նյութեր Բաֆֆու մասին, ԿԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, № 11, 1950, էջ 73։

² Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 52—53 (ընդգծումները մերն են—Ե. Գ.)։

³ Բաֆֆի, Փուռջ, հատ. 1, 1874, էջ 29 (ընդգծումները մերն են—Ե. Գ.)։

հարկ եղած խորաթափանցությամբ այդ ամենի պատճառը համարում է պարսկական, սուլթանական բռնապետական կարգերը, որը խարսխված է ճորտատիրական-ֆեոդալական հողատիրության վրա:

«Պարսկաստան, դա մի դառն կորստաբեր երկիր է, — դրում է Րաֆֆին — Այստեղ բռնակալի երկաթյա գավազունը ավելի բարբարոսաբար է ներգործում, քան մի այլ աշխարհում: Այստեղ ստրուկների աչքերից երբեք արտասունք չի չորանում: Այստեղ հայերը առավել քան մի այլ երկրում, կրել են անբախտության դառն հալածանքները»¹:

«Կալվածատիրական հողատիրությունը, — գրում է Լենինը, — ճորտատիրական ճնշման հիմքն է»²:

Ֆեոդալական ճորտատիրական-կալվածատիրական հողային հարաբերությունները վերացնել, ավատական-բռնապետական կարգերը լիկվիդացնել, որպես գյուղացիության տնտեսական, քաղաքական կյանքի բարոյաբան միակ ուղի, ապահովել հայ գյուղացուն հողով, և այս կերպ իսկ նրան իր վաստակի տերը դարձնել — այս միտքը կարմիր թելի պես անցնում է Րաֆֆու այս շրջանի ստեղծագործությունների միջով:

Ազրաբային հարցի լուծումը՝ հայ գյուղացիությանը սեփական հողով ապահովելու խնդիրը՝ Րաֆֆին համարում էր հայ շինականին կարիքից, աղքատությունից փրկելու միակ ունակ ճանապարհը, և հենց այստեղ՝ դարաշրջանի այդ հիմնական խնդիրը լուծելիս էլ առավել ակնհայտ են դառնում Րաֆֆու և Նալբանդյանի դադափարական կասկերթ: Հիմնավորենք:

«Պարսկաստանի հողը, — գրում է Րաֆֆին, — որ արդար իրավունքով պետք է բաժանված լիներ հասարակ ժողովրդի մեջ, տակավին հին կալվածատիրական ժառանգությամբ մնացել է խաների, բեկերի, մուլաների և ազնվականների ձեռքում: Եվ կալվածատիրոջ՝ յուր հողի անիրավ գործադրությունը ոչ միայն տալիս էր որևիցե վաստակ նորա մշակող ռայաթին (հպատակին), այլ թողնում էր նորան միշտ ստրուկ, որ դործում էր միմիայն իր տիրոջ համար»³:

Ժխտելով ֆեոդալական այս հողատիրական սիստեմը, Րաֆֆին միաժամանակ համարձակորեն ժխտում է նաև քաղաքական այն կարգերը՝ պարսկական ֆեոդալական, բռնապետական սիստեմը, որն օրինականացնում է այս ամենը: «Տերություն, թագավորություն կոչված բանը չէ ժողովրդի մի բազմության ճնշված և կաշկանդված բռնության շղթաներով՝ մի տիրանի երկաթյա գավազանի տակ, որոնց կառավարում էր ոչ թե արդար և ազատ օրենքը, այլ բռնակալի թուրը, ու նորա սարսափը»⁴:

Րաֆֆին Պարսկաստանի նկատմամբ երազում էր այնպիսի պետական կարգ, այնպիսի թագավոր, որն իրականացներ իր իդեալը՝ հողը արդար իրավունքով բաժանելը հասարակ ժողովրդի մեջ:

Րաֆֆին այս իդեան արտահայտել է շատ ավելի որոշ. «Այդ հոգևոր և մարմնավոր, այլ խոսքով՝ այդ ֆիզիկական և բարոյական կազմակերպության մեջ, — գրում է նա, — յուրաքանչյուր անդամ կամ յուրաքանչյուր անհատ ունի ճավասար իրավունք, նույն միևնույն չէ ազատ և մյուսն ստրուկ, ոչ ծառա և ոչ տեր, ոչ պիղծ և ոչ մահուր, այլ բոլորը մի են և հավասար բաժին ունեն իրենց տե-

¹ Րաֆֆի. *Երկերի ժողովածու*, հատ. 2, էջ 7:

² Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 26, էջ 390:

³ Րաֆֆի. *Երկերի ժողովածու*, հատ. 2, էջ 10 (ընդգծումը մերն է — Ե. Պ.):

⁴ Նույն տեղում, էջ 13:

բուրյան հողից, այլև բարեմասնություններից, որ ստեղծել է աստված նոցա համար»¹:

Այսպես է լուծել Րաֆֆին ֆեոդալական, կալվածատիրական Պարսկաստանում դարաշրջանի համար գլխավոր, կենտրոնական՝ ազրաբային հարցը: Եվ այստեղ ցայտուն կերպով դրսևորված է սոցիալական կյանքի հարցերը լուծելու Րաֆֆու լուրջ մտահոգությունը, խորաթափանցությունը:

Համադրեցեք Րաֆֆու այս միտքը Նալբանդյանի «Երկրագործության» մեջ արտահայտած «հողի իրավունքի հավասարացուցիչ բաշխման» սկզբունքի հետ և պարզ կդառնա Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը Րաֆֆու այս շրջանի երկերում, հատկապես այս շատ կարևոր հարցում:

Մի քայլել Նալբանդյանը «Երկրագործության» մեջ քննության ենթակա հարցի մասին գրում է. «Պիտի իմանաս, որ դեղի և քաղաքի յուրաքանչյուր անդամը հավասար շափով իրավունք պիտի ունենա մի որոշյալ քանակություն հողի մշակելու և գործելու». և այնուհետև՝ «հողը պատկանում է հասարակության, որի ամեն մի անդամ հավասար իրավունք ունի հավասար քանակության վերա, հավիտյան ժամանակների»²:

Արձագանքելով «պաշտելի անձնավորության»՝ Մ. Նալբանդյանի մտքին, Րաֆֆին գրում էր, որ Պարսկաստանի հողը պատկանում է կալվածատերերին, որը, սակայն, «արդար իրավունքով պետք է բաժանված լիներ հասարակ ժողովրդի միջև», որտեղ «բոլորը մի են և հավասար բաժին ունեն իրենց տերության հողից»:

Ինչպես տեսնում ենք, Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը դարաշրջանի հիմնական, գլխավոր հարցի շուրջը՝ Րաֆֆու մոտ ավելի քան անխախտ է:

Այդ՝ կալվածատիրական հողատիրության և այն օրինականացնող ֆեոդալական-բռնապետական կարգերը լիկվիդացված տեսնելու գյուղացիական մասսաների տարերային բաղձանքների և ցանկությունների դրսևորումն է, որ արտահայտել է Նալբանդյանը և նրա ազդեցությամբ՝ Րաֆֆին:

Արժե հիշատակել այս առթիվ Լենինի հայտնի խոսքերը.

«Հավասարության գաղափարը ամենառևոլյուցիոն գաղափարն է առհասարակ աբսոլյուտիզմի հին կարգի—և հատկապես ճորտատիրական, խոշորակալված հին հողատիրության դեմ պայքարելու դործում: Հավասարության գաղափարը օրինական և պրոգրեսիվ է մանր-բուրժուա գյուղացու մոտ, որչափով որ հիշյալ գաղափարն արտահայտում է պայքար ֆեոդալական, ճորտատիրական անհավասարության դեմ»³:

Րաֆֆին իր անդրանիկ վեպում տվել է պարսկահայ գյուղացիության սոցիալական կյանքի բազմաթիվ, իրոք, ցնցող պատկերներ:

«Հա, Ռոստամ,— դանգատվում է գյուղացիներից մեկը,— քանի որ մենք աչդսյես դերի կմնանք անօրենների ձեռքում, որ ոչ աստված ունեն, ոչ խրդմբաստան, մեր տունը, մեր տեղը, մեր գույքը, մեր ապրանքը՝ ինչ խոսքս երկարացնեմ, նույնիսկ մեր կին ու որդիքը՝ մերը չեն: Ինչ որ ուզեն՝ կանեն, ինչ որ կամենան՝ կկատարեն»⁴:

¹ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 19:

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 48—49:

³ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 296 (բնագծումը բնագրին է):

⁴ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 63—64:

Հայ գյուղացիության այսօրինակ տաժանելի կյանքի վերացումը Ռաֆֆին կապում էր նախ և առաջ հայ շինականի սեփական հողաբաժին ունենալու իր վաստակի տերը լինելու քաղաքական իդեալի իրագործման հետ։

Հայ իրականության մեջ ագրարային հարցը որպես գլխավոր հարց զուգակցված էր ազգային հարցի հետ։ Վերջինս առանձնակի ուժով արտացոլվել է հատկապես XIX դարի 50—70-ական թվականներին՝ հայ ազգության կազմավորման եռուն շրջանում։ Ռաֆֆին արձագանքել է նաև այս կենսականորեն կարևոր հարցին։

«Սալբիում», ըստ Ռաֆֆու, գլխավոր հարցը, որի ստեղծմամբ կարելի է կանխել հայ գյուղացիության քայքայումն ու հողազրկությունը, ապահովել ժողովրդի ազատ, անկաշկանդ զարգացումը՝ այդ հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույն պետականության հաստատումն է։ Եվ հենց այս էլ հանդիսանում է Ռաֆֆու «Սալբի» վեպի իդեական բովանդակությունը, որի համար և պայքարում են վեպի դրական հերոսները՝ Ռոստամը, Սալբին, Մելիքզադեն։

Վեպի գլխավոր հերոս Ռոստամին, բացասական կերպարներից մեկը՝ Ռես Վասակյանը տվել է հետևյալ դիպուկ բնութագիրը.

«Այդ մարդը (Ռոստամը — Ս. Պ.) միշտ և անդադար քարոզում է աղատություն, ազատություն, ազատություն... Թե հայոց ազգը իր հատուկ իշխանությունը, իր հայրենի երկիրը պիտի ունենա, թե պետք չէ ծառայել ուրիշ ազգերին, և թե ամեն մի հայ պիտի սիրե իր կրոնը, լեզուն, գրականությունը և հայրենի հողն ու ջուրը»¹։ Ռաֆֆու սիրելի հերոսի՝ Ռոստամի ազատության քարոզը հանդում է հայ ժողովրդի ինքնուրույն պետականության, հայ ժողովրդին ի մի հավաքելու քաղաքական բաղձանքին։

Եվ ահա քաղաքական այս նպատակադրման իրագործման համար Ռաֆֆին XIX դարի 60-ական թվականներին զարգացնում է ազատագրական պայքարի մի ամբողջ ծրագիր։

«Սալբի» վեպում յայն կտավի վրա պատկերելով մեր ժողովրդի տնտեսական-քաղաքական ծանր, ստրկական վիճակը, Ռաֆֆին իր հերոսի գործունեությամբ պաշտպանում է տիրապետողների դեմ ուղղված ազատագրական կոիվը ազդարարելով՝ «պատիվ և իրավունք պաշտպանելը սուրբ բան է»²։

Հակադրվելով հոգևորականության «մի կալ հակառակ շարին» բարոյախոսությունը, Ռաֆֆու հերոսը, ճիշտ Աբովյանի Աղասու օրինակով, պատասխանում է. «Տո, մի թող տուր է՜յ, թե աստված կսիրես, հենց այդ խոսքերն եղան խեղճ հայի տուն քանդողները։ Այսօր աշխարհում մի ազգ էլ չկա, որ հայի նման նեղության մեջ լինի։ Շատ ազգեր ոչ մի ազգի առաջ չեն խոնարհեցնում իրենց անպարտելի գլուխը, այլ փառությամբ և քրի զորությամբ պաշտպանում են իրենց ազգային անկախությունը»³։

«Քաջությամբ և թրի զսրությամբ պաշտպանել ազգային անկախությունը» — այս է Ռաֆֆու այս, ինչպես և հետագա վեպերում պաշտպանած ազատագրական պայքարի իդեան։

Ռաֆֆին հենց այս շրջանում խորապես համոզված էր, որ հայ ժողովրդի քաղաքական ազատագրումը չի կարելի կապել բուրժուական մեծ սկստությունների օգնության հետ։

¹ Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 354։

² Նույն տեղում, էջ 275 (ընդգծումները մերն են — Ե. Պ.)։

³ Նույն տեղում։

Հետևելով Նալբանդյանին, նրա օրինակով, Բաֆֆին մերկացնում, խայտառակության սյունին է դամում բուրժուական մեծ պետությունների կողմից տարվող գաղութային քաղաքականությունը, որ քողարկվում է լուսավորության տարածման քողով։ «Խորամանկ քաղաքականությամբ այդ երկրները ծծում են իրենց զոհերի արյունը և կողոպտում նոցա ապրանքը», — գրում է նա «Սալբի» առաջաբանում։

Մեծ վիպասանը «լուսավոր կոչված ազգերի ույժման քաղաքականությանը մեծ պոռնիկ» է կոչում, որի «քաղցրախոս շրթունքների մեջ թագցուցած է մահաբեր թույնը»¹։

Խստագույն քննադատության ենթարկելով մեծ պետությունների կողմից տարվող այսօրինակ քաղաքականությունը, որոնց համար իրենց երկրի սահմանների ընդլայնումն այլ ժողովուրդների հաշվին՝ հիմնական նպատակ է, քոնությունը՝ միջոց, Բաֆֆին սուր քննադատության է ենթարկում նաև այդ քաղաքականությունը կենսագործողներին, որոնց համար գոյություն չունի մարդկային գութ, մարդկայնություն։ Նրանք հրճվում են իրենց վարած ավազակային-կողոպտիչ քաղաքականությամբ, «մխիթարվում են, երբ շատ սպանել էին, շատ արյուն էին թափել, պարծենում են, երբ գերի էին արել յուրանց Նման մարդիկ»²։

«Սալբի» վեպի առաջաբանում առկա այս համարձակ և ճշմարտացի, նալբանդյանական շնչով զրված քննադատությունն առավել սրությամբ արտահայտվել է բուն վեպում։ Այստեղ արդեն Բաֆֆին պատկերել է փոքր ժողովուրդների վիճակը, մերկացրել գաղութարարների ահաբեկման քաղաքականության ողջ նողկալիությունը։

«Եվ արդարև, այդ երևելի տիրապետողներից, այդ վիթխարի հրեշներից ամեն մեկը, առած յուր ճանկերի մեջ մի քանի մանր ազգեր, ծամում են նրանց լերդը, ծծում նրանց արյունը։ Խղձալի զոհերը ճշում են, աղաչում են, ոչ ոք չէ լսում նրանց ձայները և նրանք լսում են ճակատագրական սպառնալիքը՝ լո՛ւռ կաց...»։ Բռնավորի երկաթյա գավազանը միշտ և հանապաղ հսկում է մեր դիխի վրա, լաց ես լինում՝ լո՛ւռ կաց, ծիծաղում ես՝ լո՛ւռ կաց, խոսում ես՝ լո՛ւռ կաց... Ա՛խ, ծեծում են ինձ՝ լո՛ւռ կաց, իմ երեխանց արյունն իմ աչքին առջև թափում են՝ լո՛ւռ կաց, իմ ապրանքը խլեցին-տարան՝ լո՛ւռ կաց, իմ տոռնը քանդեցին՝ լո՛ւռ կաց։ Ա՛խ, չեմ դիմանում այդ ցավերին, ինչ անեմ, տո թշվառ, քեզ ասում են լո՛ւռ կաց, հա լո՛ւռ կաց։ Միշտ լո՛ւռ կաց, թե ավելի խոսես լեզուդ կկտրեմ, թե էլի խոսես՝ քեզ կենդանի հողում կթաղեմ և այնտեղ կսովորես լուռ կենալ»³։

Նույն ուժով Բաֆֆին մերկացնում է ժամանակի բուրժուական այն գրականությունը, որ անամոթաբար խնկարկում է այս դահճային քաղաքականությանը, հավերժացնում։

Սակայն Բաֆֆին ուշադրավ կառնադատելով միաժամանակ նշում է, որ «ժամանակները կթառամենին այդ անիրավության ծաղիկների, իսկ գալիք սերունդները կնզովեն այդ «եղեռնագործության հերոսներին»»։

Եվ որպես այս ամենի հետևություն, Բաֆֆին գրում է. «Ես բոլորովին հա-

¹ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 273։

² Նույն տեղում, էջ 20։

³ Նույն տեղում, էջ 278։

մաձայն եմ իմ առողջամիտ խոսակցի հետ, արդարև, աշխարհի մեծամեծ արյուն թափողների պարծանքը դահճի պարծանք է և մեծ աշխարհականների փառքը՝ մեծ ավազակների փառք»¹։

Համարձակորեն կարելի է ասել, որ հայ կլասիկ դրականության մեջ, նախանդանից հետո, ոչ մեկը այսպես խիստ և անողոք չի քննադատել ու մերկացրել բուրժուական մեծ պետությունների գաղութային քաղաքականությունը, ինչպես Րաֆֆին։

Ո՞վ է Րաֆֆու կողմից վեպի առաջաբանում քանիցս ակնարկած առողջամիտ խոսակցիցը, որի հետ նա «բուրժուական համաձայն է», մի՞թե նախանդանը չէ, որին նվիրված է վեպը։ Անկասկած։

Այս բուրժուական հետո, պարզ է, որ բնավ էլ պատահական չէ, որ Րաֆֆին իր գիրքը նվիրում է պաշտելի Մ. Նախանդանին, որի ուղղությունը նա համարում էր միակ ճիշտ ճանապարհը։

Նշելով Նախանդանի և Րաֆֆու վերոհիշյալ հարցերում առկա զաղափարական կապերն ու ազդեցության ուղորտները, այնուամենայնիվ, մենք հեռու ենք Րաֆֆուն ռևոլյուցիոն-դեմոկրատ համարելու մտքից։ Գլուղացիական ռևոլյուցիայի ճանապարհով հայ, ռուս դեմոկրատիայի համատեղ պայքարով, ցարիզմի տապալմամբ՝ հայ ժողովրդի քաղաքական ազատագրման ուղուն նա չհասավ։

Ինչպես ասացինք, Րաֆֆին վաղ շրջանի իր երկերում պատկերել է պարսկահայերի և թյուրքահայերի տնտեսական, ստրկական կյանքի իրական, սրբ-տաճմիկ, ցնցող բազմաթիվ պատկերներ։ Նա ծառանում է պարսկական կառավարության ազգային այն դաժան քաղաքականության դեմ, որ վերջինս վարում էր քրիստոնյա ժողովուրդների և հատկապես հայերի նկատմամբ։

Րաֆֆու քննադատությունն այստեղ որքան խիստ ու ցասկոտ, նույնքան և ճշմարտացի է։ Այդ իրապես հանդիսանում է հարստահարվող ժողովրդական մասսաների զայրույթի և ցասման արտահայտություն։

Դատապարտելով բուրժուական մեծ պետությունների գաղութային կողոպտիչ քաղաքականությունը, Րաֆֆին միաժամանակ շարադրել է «մարդկության բարեկամների ցունկացած ոսկեղեն դաբը (ընդգծումը Րաֆֆունն է— Ե. Պ.)։ Ինչպես է պատկերացնում Րաֆֆին այդ դարաշրջանը։

«Երբ բռնությունը կվերջանա, գերի եղած ազդերը ազատություն կգտնեն ու նոցա կորուսած ժառանգությունը յուրանց կդառնա, և այնուհետև ոչ մի ազգ չի համարձակվի ավերելու մյուսի հողի սահմանները»²։

Այս, անկասկած, սոցիալական մեծ երազանք է։ Իր աշխարհայայելի ուղիղ-մական սահմանափակության պատճառով Րաֆֆուն անցյալ դարի 60-ական թվականներին հայտնի չէին և չէին էլ կարող հայտնի լինել նման դրության հասնելու իրական ճանապարհները, որի պատճառով էլ մեծ մտածողին ու գեղագետին մնում էր երազել, մտովին պատկերել այն հասարակությունը, որտեղ նա կցանկանար ապրել, տեսնել։ Սրա ցայտուն արտահայտությունը պետք է համարել Րաֆֆու 1858 թ. գրած «Իրազ» բանաստեղծությունը, որտեղ Րաֆֆին պատկերել է բաղձալի այն հասարակությունը, որտեղ կցանկանար ապրել։ Որտեղ ազատ է մարդը, իր վաստակի տեր՝ շինականը։

¹ Րաֆֆի. Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 19։

² Նույն տեղում։

Ամեն ինչ այստեղ խոսում էր անկեղծ,
Բարեկամություն, սեր, հղբայրություն
Եվ մշտական գարուն անեղծ,
Գեղափայլում էր անմահ բնություն:

Այդ հասարակության մեջ վերացված են պատերազմները: Մարդիկ փշրած սուր և հրացանից խոփ և արո՞ր են պատրաստել:

Ջկար և Ղինվոր, այլ յուր վար ու ցան,
Գործում էր ազատ մշակն արի
Եվ ժողովուրդը բնավ չէր կտրում
Դառն հոգսերի ցավալի շղթան,
Հայրենի հողում հունձքի և կալի
Էին պարտապա՞ծ, վարեին գութան¹:

Բաֆֆին «Սալբի» վեպում անխնա քննադատում, մերկացնում է կառավարող դասերին՝ հատկապես հայ հոգևորականությանը, հայ վաճառականությանը, ղեղարվեստորեն պատկերում նրանց դաշինքը օտարերկրյա կեղեքիչների հետ: Դեռևս իր առաջին գրական երեսայրիք՝ «Աղբամառա վանքը» ճամբորդական ակնարկում, պաշտպանելով լուսավորության իդեան, որպես մեր ժողովրդի փրկության, մտավոր խավարից ազատելու ճանապարհ, Բաֆֆին քննադատում է հայ հոգևորականությանը, ցույց տալիս հասարակական այս խավի շահամոլությունը, տգիտությունը, հեռամենացությունը, տնտեսությաննոր ձևերին, լուսավորության թշնամի լինելը:

«Փողի քիսային ղուրբան ըլլամ,—ասում է մի վանական,— և հոգվո է և մարմնո», «ժողովրդոց հետ ինչ բան ունենք մենք»,—ասում է մեկ ուրիշը:

Հեղինակի լուսավորության քարոզներին թշնամանքով են վերաբերվում վանականները. «Մեր ժողովուրդը իր վիճակին նայելով բավականին լուսավոր է»,—ասում է մեկը, մյուսը այս ամենը համարում է որպես «երկաթե ձվեր ածող նոր հավերի կշկշոց»:

Բաֆֆին «Սալբի» վեպի մեջ ավելի խորացրել ու խստացրել է այդ քննադատությունը, ղեղարվեստորեն մարմնավորել այս կարգի հայ հոգևորականներին: Նա այստեղ վանքերը որակել է որպես «թամբալխանաներ», ծուլների և տխմարների բնակարաններ, «որտեղ հավաքվելով յոզգի մի կտրված և անպիտան մասը, սև մազե հագուստով սովոր են հրապուրել և թովել ջերմեռանդ սնահավատ ուխտազնացներին և դառարկել նրանց քսակները»²:

Մի այլ տեղ Բաֆֆին կղերականությունը բնութագրել է որպես «հոգևոր հարստահարության կուսակցություն»: «Վանական վարդապետը և թուրքի խանը,—գրում է նա իր նամակներից մեկում,— միատեսակ հարստահարիչներ են»:

Բաֆֆին ոչ միայն մերկացրել է այս դասի շահագործողական, ժողովրդի հաշվին ապրելու ձգտումը, այլև հակադրվել է հոգևորականության քարոզած «մի կալ հակառակ շարին» մտայնությանը, այն մանկասպան դաստիարակու-

¹ Բաֆֆի, Փունջ, հատ. 1, էջ 170:

² Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 16 (ընդգծումները բնագրին են):

թյանը, որ կատարվում է այս դասի միջոցով: Հայ հոգևորականությունը հնազանդության, չարին հլուծյամբ ենթարկվելու անվերջ քարոզներով մեռցնում է մարդու մեջ ազատ կյանքի յուրաքանչյուր ձգտում, սպանում նրա մեջ հավատորդեպի սեփական ուժերը, անցողիկ համարելով այս իրական կյանքը, նա օրինականացնում է մարդկանց ստրկությունը, հնազանդությունն ու խոնարհվարքը:

«Հայոց քահանայք խոստանալով իրենց ժողովրդին մի նոր կյանք ամպերի մյուս կողմում,—դատում է Րաֆֆու սիրելի հերոսը՝ Ռոստամը,—միշտ հեռացրել են, միշտ սառեցրել են նրանց սրտերը այս աշխարհից և թույլ չեն տվել հաստատել իրենց համար երկրի վրա հիմնավոր կացություն, միշտ նրանց հրավիրելով դեպի երկինքը: Եվ այսպես, միշտ խոնարհություն քարոզելով, միշտ հեղություն քարոզելով, միշտ աղքատություն քարոզելով, թուլացրել են հայերի քաջազնական և աշխատասիրական հոգին»¹:

Դաստիարակության նպատակը հենց այդ պետք է լինի՝ ժողովրդի մեջ արթուն պահել քաջազնական ոգին, նոր սերնդին դաստիարակել աշխատասիրության և քաջության ոգով: Րաֆֆին բացառիկ տեղ է հատկացնում ընտանեկան դաստիարակությանը: Քաջություն, համարձակություն, հայրենիքին և ժողովրդին նվիրվածություն, թշնամիներից այն ազատադրելու պատրաստամտություն,—ասա, ըստ Րաֆֆու, ընտանեկան, դպրոցական դաստիարակության խնդիրները:

Քննադատելով բուրժուական մեծ պետությունների դադութային քաղաքականությունը, ժխտելով նրանց օգնությամբ փոքր ժողովուրդների, ավելի կոնկրետ, հայ ժողովրդի քաղաքական, ազատագրման իդեան, հակադրվելով հոգևորականության «մի կալ հակառակ չարին» մտայնությանը, Րաֆֆին «Սալբի» վեպում հայ ժողովրդի ազատագրման հույսերը փորձում է կապել հենց իր ժողովրդի սեփական ջանքերի հետ:

«Երբ մեր աստված, երբ մեզ նման մարդիկ ամենեին հոգս չեն քաշում մեզ համար, որ մեզ ազատեն մեր նեղիչների ձեռքից,—դրում է «Սալբի» վեպի հերոս Ռոստամն իր օրագրում,— էլի մեր ցավը մնում է մեր վզին, էլի հարկավոր է, որ մենք մեզնից մի սիրտ, մի հոգի լինենք, միմյանց օգնենք, մեր անբախտ դուխս ազատելու ուրիշից, որ մեր միսը, մեր արյունը չէ, մեզ ոչինչ օգուտ չկա»²:

Սակայն, որպեսզի ժողովուրդը հասուն լինի լուծելու իր ազատագրության, հայրենիքի քաղաքական անկախության հարցերը, հարկավոր է նախապատրաստել այն, հարկավոր է արմատապես փոխել կրթության և դաստիարակության առկա սիստեմը,—դատում է Րաֆֆին: Այստեղից էլ առաջ է դալիս լուսավորության այն ջերմ պաշտպանությունը, որ առկա է Րաֆֆու այս, ինչպես և հետագա շրջանի գործերում: Հարկավոր է նշել, որ լուսավորության քարոզը Րաֆֆու մոտ ինքնանպատակ չէ, այլ լոկ միջոց՝ ժողովրդին սթափեցնելու, իր քաղաքական ազատագրմանը նախապատրաստելու:

«Ի՞նչ անեն հայերը, ի՞նչ հոգ ածեն իրենց դիմաներին, մի՞թե առանց ուսումի, առանց գիտության և առանց լուսավորության մարդ կարող է կատարյալ մարդ

¹ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 276 — 277:

² Նույն տեղում, էջ 279:

լինել, յուր օգուտը ճանաչել, յուր վնասը հեռացնել, յուր ազգը սիրել, յուր հայրենիքը պաշտել», — ասում է Բաֆֆին:

Բաֆֆու վեպում լուսավորական իդեաների ջերմ պաշտպաններ են հեղինակի կերտած նոր սերնդի մարդիկ՝ Ռոստամը, Սալբին, Մելիքզադեն:

Լուսավորությունը Բաֆֆու այս շրջանի գործերում, ինչպես և հետագա շրջանի նամակներում և վեպերում դիտվում է որպես հայ ժողովրդի քաղաքական ազատագրումն ու անկախությունը նախապատրաստելու ուղի: Ըր նամակն՝ նձրից մեկում Բաֆֆին պատմում է հետևյալ բնորոշ միջադեպը: Ճանապարհորդելիս, հայ գյուղերից մեկում նա հանդիպում է մի հայ գեղջկուհու:

— Կարդալ գիտե՞ս, — հարցրի նրանից, գրում է Բաֆֆին:

— Ես տիրացու չեմ, որ կարդալ գիտենամ, — պատասխանում է աղջիկը:

«Ո՛չ, ես կհանեմ քո անմեղ գլխից այս մոլորությունը, — ասում է Բաֆֆին, — կարդալը քեզ ավելի պետք է, քան տիրացուի և տերտերի համար, դու պետք է կրթես նոր սերունդը, դու պետք է հարթես մեր լուսավոր ապագայի ուղին: Դու պետք է կարդալ սովորես, այն ժամտեսիկ դու այսպես աղքատ ու խեղճ չես լինի, և քո որդիքն ուրախ և հանգիստ կանցուցանեն իրենց օրերը»¹:

Բաֆֆին լուսավորության հետ էր կապում նաև տնտեսության մշակման առաջավոր եղանակների լայն օգտագործումն ու արմատավորումը:

Նա չի իդեալականացրել տնտեսության նահապետական, կյանքի հետամնաց, իր դարն ապրած ձևերը: Բաֆֆին ինչպես այս, այնպես էլ հետագա շրջանի երկերում հանդես է գալիս որպես տնտեսության պատմականորեն պրոգրեսիվ, առաջավոր եղանակի պաշտպան գրող:

Պատմելով մի պարսիկ իշխանի հետ ունեցած իր հանդիպման մասին, Բաֆֆին մեզ հետաքրքրող հարցի մասին գրում է. «Այնուհետև իբրև պտուղ լուսավորության և արհեստի, օրինակ բերեցի երկաթուղիները, շոգենավերը, հեռագիրները և շողիքարչ մեքենաներով գործարանները, որոնցից զուրկ էր Պարսկաստանը»²:

Բաֆֆին ջերմորեն պաշտպանում է Պարսկաստանի (ինչպես և Հայաստանի) բազմակողմանի զարգացումը տնտեսության մշակման առաջավոր ձևերի, նոր տեխնիկայի արմատավորումը: 60-ական թվականներին բոլոր երկերում Բաֆֆին հանդես է գալիս որպես ժողովրդական մասսաների և հատկապես ամենից ավելի բազմամարդ, ամենից ավելի հարստահարված մասի՝ ազատագրական կռիվի հիմնական ուժի՝ գյուղացիության շահերի արմատական պաշտպանություն: Հայ և օտարերկրյա շահագործողների կրնկի տակ հյուժաքամվող ժողովրդական մասսաների շահերից ելնելով էլ նա իր վեպում քննադատել է հայ հասարակության վերնախավերին, գեղարվեստորեն համոզիչ կերպով պատկերել հայ և պարսիկ շահագործողների փոխադարձ կապն ու սերտ համագործակցությունը:

Ինչպես հայտնի է, հայ գրական-լուսավորական շարժման կարևոր, բնորոշ կողմերից մեկն էլ այն ջերմ վերաբերմունքն էր, որ մեր լուսավորիչները՝ հատկապես Լևոնյանը տածում էին դեպի Ռուսաստանը, դեպի ռուսաց տիրապետությունը, արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորելու պատմականորեն պրոգրեսիվ, մեր ժողովրդի պատմության ամենաբախտորոշ ակտը: Պատ-

¹ Բաֆֆի. Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 606:

² Նույն տեղում, էջ 601:

մական այս բացառիկ կարևոր քաղաքական ակտի նկատմամբ ցուցաբերած դրական կամ բացասական վերաբերմունքից իսկ երևում է այս կամ այն գործիչի, գրողի աշխարհայացքը, նրա վերաբերմունքը դեպի ժողովրդական մասսաների ճակատագիրը:

Ի պատիվ Րաֆֆու, պետք է ասել, որ նա այս շատ կարևոր հարցում ևս կանգնած էր Արժանի տեսակետին: Նշելով, որ պարսկական բռնապետական կարգերն անհամատեղելի են լուսավորական իդեաների տարածման հետ, Րաֆֆին պարսկահայերի վերոհիշյալ ծանր դրությունը նմանեցնում է «առաջ քան ռուսաց տիրապետությունը» կովկասյան նահանգներում նույն ղզլբաշիների կողմից հեծող հայության կացությանը:

«Բոլոր հայերը ոտքի են կանգնած, սկսում են աղատվել պարսից լծից ի հուրախություն Ալմաստի,—ասում է Մեխակը «Հաբեմում», ավելացնելով,— որ ռուսները մեզ նման քրիստոնյաներ են, նրանք գերի չեն առնում, պարսիկների նման չեն թալանում»:

Փոքր ինչ ուշ, 1871 թ. գրած «Ուր է իմ հայրենիք» բանաստեղծության մեջ Րաֆֆու լիրիկական հերոսը չի կամենում ապրել ո՛չ Պարսկաստանում, ո՛չ Թյուրքիայում, որտեղ թագավորում է բռնությունը, ո՛չ էլ Ֆրանսիայում և Գերմանիայում, որովհետև ամեն տեղ առկա է ճնշումը, շարշարանքը, այս երկրներից համեմատաբար լավը Ռուսաստանն է, որտեղ «հնարավոր է հանգիստ ապրուստ», իսկ Հայաստանը... Հայաստանում օտար նվաճողներն են իշխում, այնտեղ

Տիրում է խավար և աղքատություն,
Մշակը թշվառ դորժո՛ւմ է, գործո՛ւմ,
Աղան խլում է դառն աշխատանքը,
Նորա արյունը քամո՛ւմ է, ծծո՛ւմ¹:

Րաֆֆու լուսավորական-դեմոկրատական, ազատագրական կռիվի բոլոր ծրագրերը ուղղված էին մի սևեռուն նպատակի՝ վերջ առալ հայ ժողովրդի, հայ շինականի այսօրինակ ստրկական դառն կյանքին:

Այս ամենով էլ պայմանավորվում են Րաֆֆու վաղ շրջանի երկերում առկա հայրենասիրությունը, ժողովրդայնությունն ու դեմոկրատական տենդենցները:

3

Գեղարվեստական ինչպիսի՞ մարմնավորում են ստացել Րաֆֆու այս հայացքները հեղինակի առաջին ծավալուն «Սալբի» վեպում: Րաֆֆու այս վեպի դրական հերոսների առաջին բնորոշ գիծը, որով նրանք տարբերվում են Պողոսյանի, Աղայանի 60-ական թվականների հայտնի գործերից, այն է, որ Րաֆֆու հերոսները մեզ ներկայանում են որպես ակտիվ, քաղաքական, ազատագրական պայքարի որոշակի հայացքների տեր մարդիկ, որոնք ոչ միայն բողոքում, այլև փորձում են ազատագրական պայքարի ուղիներ նշել, որոնք դիմադրում են բռնությունը, գիտակցաբար պայքարում կյանքի մեռած տրագիցիաների, սովորությունների դեմ: Րաֆֆու կերտած գրական հերոսները՝ Ռոստամը, Սալբին, Մելիքզադեն նոր սերնդի մարդիկ են, ակտիվ, գործունյա և դատող:

¹ Րաֆֆի. Փունջ, հատ. 1, էջ 178:

Բաֆֆու «Սալբին», Աբովյանի «Վերքից» հետո, հայ գրականության մեջ երկրորդ սոցիալական, բաղափական վեպն է: Բաֆֆու հերոսը՝ Ռոստամը Աղասուց հետո երկրորդ դրական կերպարն է, որը հանդես է գալիս ազատագրական կռվի իդեաներով:

Պետք է նշել, որ այս երկու դրական հերոսների միջև ընդհանուր շատ կողմեր կան և այս ոչ միայն այն պատճառով, որ Բաֆֆին 60-ական թվականներին գտնվում էր Աբովյանի, Նալբանդյանի գաղափարական ազդեցության տակ, այլև նրանով, որ այստեղ ևս շոշափվում են հայ ժողովրդի քաղաքական ազատագրության կենսականորեն կարևոր հարցերը:

Ռոստամը նոր սերնդի մարդ է, ակտիվ, խանդավառ: Քաջության և համարձակության մարմնացում է նա, տոգորված ազատասիրական, մարդասիրական վեհ իդեաներով: Նա կարեկից էր նեղյալներին, «պատրաստ՝ յուր արյունով սրբել նրանց աչքերի արտասունքը»¹:

Այս կերպ իսկ նա դառնում է հազարավոր իր նմանների քաղաքական-ստրկական կյանքը կրող աշխատավորության բողոքի արտահայտիչը, հասարակական շահագործվող խավերի սոցիալական էությունը դրսևորող կերպար: Հերոսի անձնական վերոհիշյալ բարեմասնությունները, ըստ Բաֆֆու, ազատ դաստիարակության արդյունք են:

«Վարժատան մեջ շմաշվեց նրա կյանքը: Խելացի բնությունն ինքն էր նրա վարժապետը»²:

Վեպում Բաֆֆին դրսևորել է նաև իր թշնամանքը դեպի կապիտալիստական հարաբերությունները, դեպի փողի իշխանությունը, որը սպանում է մարդու մեջ ամեն մի ազատասիրական ոգի, մարդկանց անխարդախ սիրտը «թուլավորում շահասիրական ախտով»: Ռոստամը ազնիվ էր և վեհանձն: Նա լավ համարում ուներ մարդկանց մասին: «Նա բոլորին համարում էր յուր հայրը, բույրը, եղբայրը»³:

Իր նամակներից մեկում Բաֆֆին այս մասին գրել էր.

«Ես չուզեցի ասել պարզամիտ գյուղացուն, քե մաղիկ միաօրինակ ստեղծվածներ են, քե նրանց մեջ ամենևին խտրություն չկա, քե՛ մահմեդականը, քե՛ կոապաշտը և քե՛ քրիստոնյան բոլորն էլ եղբայրներ են»⁴:

Ռոստամը ատելությունը է լցվում դեպի տերերը, դեպի հայրենի և օտար կեղեքիչներ ուս Վասակյանը, Մելիքը և օտարի յուծր օրինականացնող հայ հոգեբորականությունը: Բաֆֆին հայ ժողովրդի քաղաքական կյանքի ողջ դժբախտության հիմնական պատճառը համարում է այն, որ նա ճնշված, սեփական պետականությունից զուրկ ժողովուրդ է: Պայքար հայ ժողովրդի քաղաքական անկախության համար — ահա Բաֆֆու հերոսի նպատակակետը: Ռոստամը գործի մարդ է. ազատության ջերմ պաշտպան է, ազատության համար կռվելն ու մեռնելը նրա կյանքի խորհուրդն է:

Նման հերոսական կերպար է նաև Սալբին: Սալբին նահապետական կյանքի կապանքներից ազատ, հասարակական կյանքով ապրող ու գործող հայ օրիորդի իդեալական կերպար է:

¹ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 57:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 59:

⁴ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 594—595 (ընդգծումը մերն է — Ե. Պ.):

«Արդարեւ,— գրում է Րաֆֆին,— Ասիայի կանայք ուրիշ ոչինչ չեն, քան տնտեսական ծառայությանց մեջ մի անարդ զործիր»¹։

Սալբին հայ կնոջ այս վիճակի դեմ ըմբոստացող առաջին հայ օրիորդն է, Րաֆֆու իդեալական հերոսուհին։ Նա Ռոստամի զաղափարակից, սրտազին ընկերն է։

1865 թ. գրած «Առփի», «Նինո» բանաստեղծություններում Րաֆֆին, Պատկանյանի օրինակով, ծաղրում է հարստությանը շլացած, սալոնային կյանքով ապրող, իդեալագուրկ հայ բուրժուական նորելուկ սերնդին։

Սալբին սրանց հակապատկերն է։ Ռես Վասակյանի բոլոր փորձերը՝ հարստությանը շլացնելու նրան, Սոլոմոն Ավագակենցի հետ ամուսնացնելու՝ սպարդյուն են անցնում։ Սալբին հավատարիմ է մնում իր ուխտին։ Ի տարբերություն 60-ական թվականներին հրապարակված Պոռչյանի և Աղայանի վեպերի դրական հերոսների, Րաֆֆու «Սալբի» վեպում պատկերած այս դրական կերպարների գործունեության և մտայնության մեջ հիմնականը՝ քաղաքական հարցերն են, տիրապետող սոցիալական կարգերի քննադատությունը, հայ ժողովրդի քաղաքական ազատագրման խնդիրները։ Այլ հարց է, որ այս ուղղությամբ արծարծված բազմաթիվ հարցեր և նրանց լուծման ուղիներն այս շրջանում պարզ չէին Րաֆֆուն։ Րաֆֆու հերոսներին քիչ են զբաղեցնում անձնական ապրումներն ու զգացումները, նրանք ակտիվ, գործունյա և խոհուն, հասարակական կյանքով ապրող մարդիկ են։

Րաֆֆին առաջինը մեր գրականության մեջ զեղարվեստորեն պատկերեց հայ և պարսիկ շահագործողների շահերի միասնությունը, նրանց սերտ համագործակցությունը, միասնական ճակատը ժողովրդի և նրանց պաշտպանների դեմ։ Այսպիսի կապերով են կապված ուս Վասակյանը պարտատեր Միրզա Ֆաթալիի հետ, Մելիքը և պարսիկ խանը։ Իմ այս տեսնում են հենց իրենք՝ գյուղացիները։ «Մելիքը խանի հետ խոսքերը մեկ արած՝ խեղճ գյուղացիների տունը քանդում են»,—ասում է գյուղացիներից մեկը։

«Այսպես է, եղբայր, երկու սատանա երբ միացան, աշխարհս մատի վրա պտույտ կտան»,— պատասխանում է մյուսը²։

«Խեղճ հայեր,— վշտաբեկ բացազանչում է Ռոստամը,— բավական չէ, որ ուրիշները կողոպտում են ձեզ և ձեր գլխավորները, ձեր իշխանները՝ ձեր մարմինն ցեց են դարձել»։

Հայրենի և օտար ցեցերի հակաժողովրդական ողջ գործունեության ակտիվ մասնակիցներ են հայ հոգեորականության ներկայացուցիչները՝ տեր Մարկոսն ու տեր Մարութը։ Րաֆֆին սրանց պատկերմամբ զեղարվեստորեն հիմնավորել է իր այն բնութագրումը, թե «կղերականությունը հարստահարության կուսակցություն է»³։

Ռոստամը սոցիալական այս վիճակի դեմ ծառացող առաջին հավաքական կերպարն է հայ դրականության մեջ, շահագործվողների նկատմամբ՝ գյուղացիական մասսաների գայրույթի և ատելության մարմնացումը։

¹ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 103։

² Նույն տեղում, էջ 340։

³ Նույն տեղում, էջ 337։

Բաֆֆու այս շրջանի հասարակական-քաղաքական աշխարհայացքի հետ սերտորեն առնչվում են նրա գրականագիտական հայացքները։ Նա գրականությունը տալիս էր շատ որոշակի հասարակական ֆունկցիա, այն համարում էր կախարդական հայելի։

«Ռոմաններն են այն կախարդական հայելիքը,— գրում է նա «Սալրի» առաջաբանում,—որոնց մեջ ազդերը, տեսնելով յուրանց կյանքի տղեղ և ավիրված պատկերը, յուրանց մոլորությունների ամթալի նկարագիրքը ուսում են շինել, բարեկարգել յուրանց գրությունը»¹։

Այսպիսով, Բաֆֆին գրականությունը դիտում էր որպես հասարակական կյանքի վերափոխման գեղեցիկ, ընդունում և ընդգծում վերջինիս հասարակական հսկայական ճանաչողական նշանակությունը, ռոմանները համարում որպես «ազդերի բարոյական և իմացական կյանքի պատմագրություն»²։

Անդրադառնալով հայ գրականության վիճակին, Բաֆֆին «Սալրու» առաջաբանում, Աբովյանի օրինակով, քննադատում է հայ գրականության անմխիթար վիճակը։ «Մեզ մոտ մինչ այժմս,—ասում է Բաֆֆին,—խիստ սակավ են այն գրքերը, որը մոտ լինեք ընթերցող հասարակությանը, սրտերին, հասկացողությանը, մի գիրք, որը մեջ հայ մարդը նշմարեք յուր անձը, և յուր կյանքը իսկությունը»³։

Հրապարակի վրա եղած մի քանի գրքերի աբեղայական կրթությանը հայ մարդը զգվանքով է վերաբերվում, քանի որ այնտեղ չի գտնում «սրբոց աղոթքներ, առասպելական հրաշքներ» մեր նախնյաց։

Հայ ընթերցողը կարդալու գիրք չունի։ Իդեալների մեծ մասը կենսազուրկ, ընթերցողի հոգուն ու սրտին ոչինչ չտվող, զաղափարազուրկ գրականություն է գրված «հին և մեռած լեզվով»։

Բաֆֆին մեզ ներկայանում է որպես ռեալիստական գրականության պաշտպան։ Նա պահանջում է գրողից այնպիսի երկեր, «որք կարողանային սնունդ տալ նոցա (ընթերցողների) սրտերին և գրավել նոցա մտքերը»⁴։

Հայ ընթերցողը, հայ օրիորդը սիրով կարդում է Տուրգենևի, Ժորժ Սանդի վեպերը, որովհետև այստեղ նա «սրտի մոտ բաներ է գտնում», ինչպես կասեր Աբովյանը։ Հայերը անընթերցասեր չեն։ Նրանք, այնուամենայնիվ, մեծ ախորժակով լսում են հեքիաթներ, սիրով կարդում «Պղնձե քաղաքի» հիմար ասածները և կամ «խիկար իմաստունի խրատները»։

Ի՞նչ ահա նման պայմաններում առկա խիստ սակավ գրքերից մեկը, որտեղ երևում է հայ կյանքը իսկությունը, Բաֆֆին համարում է Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը։

Բաֆֆին Նալբանդյանից հետո երկրորդ հայ հեղինակն է, որ այնպես բարձր է դնահատում Աբովյանի «Վերքը», նրա հասարակական բովանդակությունը։ 1855 թ. գրած իր առաջին «Սալրի» վեպի առաջաբանում նա գրում է. «Անմահ Աբովյանի «Վերք Հայաստանին» ապացույց է մեր խոսքերին, ամեն մի հայ մարդ, որքան անզգա լինեք նաև սառնասիրտ, դարձյալ սիրում է այդ հրաշալի»։

¹ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 13։

² Նույն տեղում։

³ Նույն տեղում, էջ 16։

⁴ Նույն տեղում, էջ 16—17։

գիրքը: Այդ գիրքը թորում է ամեն մի հայի աչքերից արտասուք, երբեմն շարժում է նոցա ծիծաղը, իսկ շատ անգամ ուռեցնում է նոցա կարծիքները մի վսեմ ազգասիրական ողևորությամբ: Ինչու: Որովհետև ազգի հոգին խոսում է այդ գրքի խորքից ու ընթերցողը ճանաչում էր նորա թույլ, կիսամեռ ձայնը»¹:

Այսպես, ուրեմն, ռեալիզմն ու հայրենասիրությունը, ըստ Րաֆֆու, հանդիսանում են Արժանի «Վերքի» հիմնական բնորոշ գծերը, «Վերքի» հմայքի գաղտնիքը:

Անդրադառնալով գրականության հասարակական - դաստիարակչական նշանակությանը, Րաֆֆին գրում է. «Ինչ գիրք կարող է ժողովրդի սրտին և հոգուն ավելի մոտ, որքան մի վեպ, որ կախարդական հայելու նման պատկերում է իր մեջ նորա կյանքը, երևան է հանում հասարակական տիպեր յուրանց ղեղեցիկ և այլանդակ նկարագիրներով»²:

Ժամանակի հայ գրականության հիմնական թերին նման՝ հայ կյանքի իսկության մասին պատկերող գրքերի՝ ումանների պակասն է:

«Մենք ունենք ուսումնականներ, ունենք գրողներ, — ասում է Րաֆֆին, — սակայն մի մասը ի վիճակի չլինելով ստեղծագործելու, ավելի ընդունակ են թարգմանելու, քան թե ինքյանք մի բան գրելու»: Մյուս ստեղծագործող մասն էլ, ապրելով Եվրոպայի տարբեր քաղաքներում, ի վիճակի չի գրելու ազգի մասին, «որովհետև նոքա խիստ սակավ ծանոթ են յուրանց ազգի կյանքին»³:

Այստեղից էլ բխում է Րաֆֆու հիմնական պահանջը գրողից՝ գրել այն կյանքի մասին, որը ծանոթ է: Հայ ազգի կյանքի մասին կարելի է գրել նրա մոտ ապրելով, նրան հարազատ զգալով և այս էլ հանդիսանում է Արժանի ստեղծագործության հաջողության հիմնական նախապայմանը:

«Հայությունը կարելի է ճանաչել Հայաստանի սրտում, — գրում է Րաֆֆին, — աղքատիկ խրճիթների մեջ, ուր նա մնացել է յուր մաքուր նահապետական բարբ ու վարքով, ուր նա կրում է յուր վրա դժբախտության սև կնիքը»⁴:

Այսպես էլ լուծել Րաֆֆին գրականության և կյանքի, գրողի և իրականության փոխհարաբերության հարցը:

Նախնայանր մեր գրականության, քննադատության հետամնացության հիմնական պատճառը իրավացի կերպով համարում էր մեր հետամնաց, ավերված կյանքը: Րաֆֆին շատ խոցեր ու արատներ էր տեսնում մեր կյանքում, գրելով, որ «հանճարներն ու տաղանդներն ավելի զարգացած հասարակական կյանքի արտահայտություն են»:

«Վիպասանի լեզուն, — գրում է Րաֆֆին «Սալբիի» առաջաբանում, — ժողովրդի կենդանի խոսքն է, «այս հիման վրա էլ հեղինակի անդրանիկ վեպը, որ սկզբում գրված էր զրաբարով, «Հյուսիսսամյայի» հրապարակումից հետո մենք զղացինք մեր հին սխալը, — ասում է Րաֆֆին, — մեր վեպի հին լեզուն ղեպի նորը փոխելով»:

Ծանոթանալով հայ իրականությանը, հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական կյանքին, Րաֆֆին ուրախալի փիչ բան էր տեսնում այնտեղ և իր երկերը իրավամբ համարում էր դառն հառաչանքի արձագանք:

¹ Րաֆֆի. *Երկերի ժողովածու*, հատ. 2, էջ 16:

² Րաֆֆի. *Փունջ*, հատ. 1, 1874, էջ 8:

³ *Նույն տեղում*, էջ 17:

⁴ *Նույն տեղում*, էջ 10:

Այստեղից էլ գրական այն ուղղությունը՝ քննադատական ունակումը, որ նա կոչում է «բացասական ուղղություն»:

Գրականությունը պետք է արտացոլի կյանքը, կյանքի իսկությունը: Գրողը պետք է քաջատեղյակ լինի պատկերած իրականությանը:

«Որքան քաղցր է կենակցությունը ռամիկի հետ, հարազատ ժողովրդի որդու հետ,— գրում է Րաֆֆին փոքր ինչ ուշ տպված իր պարսկական նամակներից մեկում,— եթե դու ուզում ես ճանաչել նրան, պետք է նրա խրճիթը մտնես, նրա հետ բաժակներ փոխես»¹:

Այստեղ հիանալիորեն արտահայտված են Րաֆֆու այս շրջանի աշխարհայացքի և՛ դեմոկրատական տենդենցները, և՛ պաշտպանած գրական այն ուղղությունը, որը հիմնական գծերով արտահայտվել է նաև նրա հետագա շրջանի ստեղծագործություններում:

¹ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 382: